Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2024-2025 ուստարի)

10-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

1. Ե՞րբ է մահացել Ալեքսանդր Մակեդոնացին. 0,5 մ.
   ա/ Ք.ա. 326 թ. բ/ Ք.ա. 324 թ.
   գ/ Ք.ա. 323 թ. դ/ Ք.ա. 321 թ.
2. Ե՞րբ է տեղի ունեցել պատերազմ փոքրասիական հինգ պետությունների միջև Արտաշես Ի-ի օրոք. 0,5 մ.
   ա/ Ք.ա. 185-180 թթ. բ/ Ք.ա. 184-179 թթ.
   գ/ Ք.ա. 183-178 թթ. դ/ Ք.ա. 183-179 թթ.
3. Որտե՞ղ է 481 թ. որոշվել սկսել հակապարսկական ապստամբություն. 0,5 մ.
   ա/ Ակոռի բ/ Նվարսակ գ/ Շիրակ դ/ Դվին
4. Ե՞րբ է կառավարել Վռամշապուհ թագավորը. 0,5 մ.
   ա/ 388-414 թթ. բ/ 389-414 թթ. գ/ 391-413 թթ. դ/ 391-414 թթ.
5. Ո՞վ է սկսել 774-775 թթ. հակաարաբանական ապստամբությունը. 0,5 մ.
   ա/ Գրիգոր Մամիկոնյան բ/ Մուշեղ Մամիկոնյան
   գ/ Արտավազդ Մամիկոնյան դ/ Սմբատ Բագրատունի
6. Ե՞րբ է Լևոն II-ը գրավել Անտիոքը. 0,5 մ.
   ա/ 1204 թ. բ/ 1214 թ. գ/ 1215 թ. դ/ 1216 թ.
7. Ո՞ր թվականին է ստեղծվել Կովկասի փոխարքայությունը. 0,5 մ.
   ա/ 1840 թ. բ/ 1842 թ. գ/ 1844 թ. դ/ 1849 թ.
8. Քանի՞ ամրոց (բերդ) ուներ Վասպուրականի թագավորությունը. 0,5 մ.
   ա/ 70 բ/ 72 գ/ 74 դ/ 76
9. Որքա՞ն հեծյալ մարտիկներ ուներ Երվանդ I Սակավակյաց թագավորը: 0,5 մ.
10. Եգիպտոսի ո՞ր թագավորին է Տիգրան II-ը ցուցաբերել օգնություն: 0,5 մ.
11. Ո՞վ էր ղեկավարում հայ կամավորներին Շամշադինում 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ: 0,5 մ.
12. Ինչպե՞ս էր վերնագրված Հ. Գաթրջյանի երկհատորյակը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա/ Ադրբեջանի խորհրդայնացումը
    բ/ Հայաստանի մանդատն ընդունելու մերժումն ԱՄՆ Սենատի կողմից
    գ/ Լևոն Շանթի պատվիրակության մեկնումը Մոսկվա
    դ/ Արցախահայության 9-րդ համագումարում երկրամասի հռչակումը ՀՀ մաս
    ե/ Շուշիի հայերի ջարդը
    զ/ Մարաշի գրավումը քեմալականների կողմից
    է/ Ստորագրված փաստաթղթով Ռուսաստանի կողմից թուրքերի ազգային ուխտի ճանաչումը
    ը/ Թիֆլիսի համաձայնագիրը ՀՀ և Ռուսաստանի միջև
    թ/ Կիլիկիայի ինքնավարության հռչակումը Մ. Տամատյանի գլխավորությամբ

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. Արամազդ	2. Աստղիկ	3. Տիր
4. Նանե	5. Անահիտ	6. Վահագն

ա. Արտեմիս	բ. Զևս	գ. Ապոլոն
դ. Հերակլես	ե. Աթենաս	զ. Ափրոդիտե

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Հուստինիանոս I-ի օրոք Բյուզանդական Հայաստանը բաժանվել է հինգ մասի:
բ/ 851 թ. Աբուսեթը ձերբակալել է Բագարատին:
գ/ Բագրատունիների օրոք հայկական բանակն ուներ 100-120 հազար զինվոր:
դ/ Անին մոնղոլներին դիմադրել է 12 օր, իսկ Կարինը՝ երկու ամիս:
ե/ 1880-ական թթ. Արևմտյան Հայաստանում փակվել են հայկական 300 դպրոցներ:
զ/ Մոսվայի մի խումբ հայ ուսանողներ ստեղծել են «Հայասերների միություն» կազմակերպությունը:
է/ Աղբյուր Սերոբը, ով ծնվել էր Սոխորդ գյուղում, սպանվել է 1899 թ.:
ը/ 1938 թ. հունիսին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ է ընտրվել Մացակ Պապյանը:
թ/ Ավստրիայի դուքսը համաձայնվել է օգնել Իսրայել Օրուն:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

ա/ Խոպան հողերի հաշվին մշակելի դարձած հողատարածքները կոչվում էին «նորք»:
բ/ Իշխանաց իշխանը Բագրատունիների օրոք իրականացնում էր հազարապետի գործառույթներ:
գ/ Պայլը Կիլիկյան Հայաստանում վարում էր արքունի գրագրությունը:
դ/ Մ. Բաղրամյանը հայկական պետականության անկման հիմնական պատճառներից էր համարում միապետական կառավարման համակարգը:
ե/ «Ռազմական կոմունիզմի» քաղաքականության էությունը գյուղացիների ու բանվորների զինումն էր:
զ/ 1901 թ. սկսել է գործել Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղին:
է/ Ֆիդայի արաբերեն նշանակում է հետևակ:
ը/ Նէպ-ին անցումը խրախուսել է պարենմասնատրման կիրառումը:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ 1022 թ. Բյուզանդիայի Վասիլ II կայսրը Պետրոս Գետադարձից պահանջել է Անիի թագավորությունը հանձնել իրեն:
բ/ Հնդկահայերը որոշել էին Հ. Էմինի տրամադրության տակ դնել 12000 ռուբլի:
գ/ Ռուսական զորքերի Երևանյան ջոկատի հրամանատարն էր Արշակ Տեր-Ղուկասովը:
դ/ 1877 թ. հունիսին 12-հազարանոց թուրքական զորքը պաշարել է Բայազետը, որի դիմադրությունը շարունակվել է 23 օր՝ մինչև ռուսական զորքերը հասան օգնության:
ե/ Թամար թագուհին (1184-1207) Սարգիս Զաքարյանին վստահել է ամիրսպասալարի պաշտոնը:
զ/ Երևանի կաուչուկի գործարանն առաջին արտադրանքը թողարկել է 1940 թ.:
է/ 1937 թ. սեպտեմբերին հարցաքննության ժամանակ երրորդ հարկի լուսամուտից իրեն վայր է նետել ՀԽՍՀ ժողկոմխորհի նախկին նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանը:
ը/ 1921 թ. վերջում Իրաքից հայրենադարձվել է մոտ երեք հազար հոգի:
թ/ 390-րդ դիվիզիան ծանր կորուստներ է ունեցել Կերչի համար կռիվներում:

1	2	3

18. Գտե՛ք, նշե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

Սմբատ Գունդստաբլի «Տիեզերական պատմությունն» լուսաբանում էր Կիլիկյան Հայաստանի պատմությունը:

19. Դիտե՛ք նկարը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա. Նկարում պատկերված գործիչը ի՞նչ պաշտոն է ստանձնել Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո:
բ. Ե՞րբ և որտե՞ղ է նա պայմանագիր ստորագրել Մդիվանու հետ:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Որքա՞ն հանդիսական էր տեղավորում Կռոմի Կոլիզեումը. 0,5 մ.
   ա/ 50 հազար բ/ 70 հազար գ/ 80 հազար դ/ 100 հազար
2. Դարեհ I-ի օրոք բանակի հիմքը կազմող «Անմահների գունդը» որքա՞ն մարտիկներից էր բաղկացած.0,5 մ.
   ա/ 10 հազար բ/ 25 հազար գ/ 30 հազար դ/ 50 հազար
3. Ե՞րբ է կառավարել ֆրանկների առաջին թագավոր Քլոդվիգը. 0,5 մ.
   ա/ 480-516 թթ. բ/ 486-511 թթ. գ/ 490-516 թթ. դ/ 479-520 թթ.
4. Ո՞ր տիեզերական ժողովն է հաստատել քրիստոնեության Հավատո հանգանակը. 0,5 մ.
   ա/ Կոստանդնուպոլսի բ/ Նիկեայի գ/ Եփեսոսի դ/ Քաղքեդոնի
5. Բյուզանդական ո՞ր կայսրն է հունարենը դարձրել պաշտոնական լեզու: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
   1. Անաքսագորաս
   2. Պլատոն
   3. Սոլոն Աթենացի
   4. Արիստոտել

   ա. Ք.ա. VII-VI դդ. բ. Ք.ա. IV դ. գ. Ք.ա. V-IV դդ. դ. Ք.ա. V դ.

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
   ա/ Ռամզես II-ի օրոք 1256 թ. կնքվել է հաշտության պայմանագիր Խեթական պետության հետ:
   բ/ 729 թ. Ասորեստանը գրավել է Բաբելոնը և դարձել Առաջավոր Ասիայի հեգեմոնը:
   գ/ Ք.ա. III հազարամյակի սկզբներին ձևավորվել են փոքր պետություններ, որոնցից էին Քանեսը, Կուսսարը, Խաթթուսասը:
   դ/ Ցին թագավորության արքա Ին Չժենը Ք.ա. 221 թ. նվաճել է Չինաստանի մյուս բոլոր թագավորությունները:
   ե/ Ք.ա. 46 թ. Հուլիոս Կեսարը հռչակվել է ցմահ դիկտատոր:
   զ/ Ավատատերերի դասակարգը բաղկացած էր աշխարհիկ և հոգևոր ավատատերերից, որոնք վաղ միջնադարում կազմում էին բնակչության 1-2%ը:
   է/ Կառլոսի Մեծի որդի Լյուդովիկոս Բարեպաշտը 819 թ. կայսրությունը բաժանել է իր որդիների միջև:
   ը/ Պելոպոնեսյան պատերազմներն ավարտվել են Ք.ա. 406 թ.:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

10.02.2025 թ.